64

Էլմ. 17

1. Տիրոջ կվստահիս կյանքիդ մեջ բոլոր,
Ան կըլլա թանկագին քեզի ամեն օր,
Իրեն աշակերտն ես և Իր խոսքով լի,
Սուրբ Հոգին կուտա քեզ և ալ ավելի:

Եվ ալ ավելի, (2)
Որ կյանք ունենաս դուն
Եվ ալ ավելի:

2. Անհուն սիրույն համար փառք տանք Գառնուկին,
Որ եկավ այս աշխարհ տունեն երկնային,
Սուրբերը թող երգեն փառք Անոր անվան,
Որ արյամբ Իր կնքեց գործն մեր փրկության:

3. Ե՛կ Իրեն հավատքով, շուտ հրավերն լսե՛,
Հանձնե՛ ինքզինքդ Անոր, զի Իր կամքն այս է,
Գնա՛, քեզ կընդունի Փրկիչն պաշտելի,
Կթափե օրհնություն և ալ ավելի: